ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՕՐԱԹԵՐԹ ԱՄԵՆԱՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ՓԱՓԱԶԵԱՆԻ ԵՒ Ե. ՏԱՐԱՅԵԱՆԻ

Տարեկան 10 թուրք. ոսկի արտաքին, 6 թուրք. ներքին արտաքին 3 թ. 50 կ.
Վեցամսեայ 5 կ., Եռամսեայ 1 թ., Ամսական 5 կ.

Հրատարակութեան տասներկուերորդ տարին է սկսած 1 Յունուար 1895 թուականէն:

Հասցէ Թղթակցութեանց եւ գրամական ուղարկութեանց՝ Редакція «Нор-Дарь», Константинополь, Галата, Тюнель.

Ծանուցումներ 9-րդ էջի 2-րդ սիւնակին վրայ եւ մասնաւոր թերթերով՝ 2 կ., բայց ոչ պակաս քան 2 թ.

ՆՈՐ-ՕՐ

1895

№ 182 ՏԱՍՆԵՐԵՔԱՒՈՐԵՑԱՆ ՏԱՐԻ Երկուշաբթի 12 Յունուարի

№ 182 ՏԱՍՆԵՐԵՔԱՒՈՐԵՑԱՆ ՏԱՐԻ Երկուշաբթի 12 Յունուարի

ԱՄԵՆԱՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

(Շարունակութիւն վերի թիւէն)

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՍՈԼԱՆ, Երկշաբթի.—Յետոյ սակաւ մը խաղաղութիւն տիրեց Հայկական Հարցի շուրջ. մեր թղթակիցները կը գրեն մեզի, թէ Եւրոպական դեսպանները կը շարունակեն իրենց բանակցութիւնները Հայկական Հարցի մասին, եւ թէ Եւրոպական Կոմիտէն ալ կը շարունակէ իր ուսումնասիրութիւնները:

Ա. ՍՈԼԱՆ, Երկշաբթի (առ.).—Ամսոյս 6-ին Հոգեշնորհ Ներսէս Վարդապետ Տէր-Ներսէսեան, Ներսիսեան Հոգեւոր Վարժարանի Տեսուչ, Հոգեշնորհ Տ. Գրիգոր Վրդ. Զօհրապեան, Պատուելի Տ. Գրիգոր Քհնյ. Գալուստեան եւ Պատուելի Տ. Գրիգոր Քհնյ. Գալուստեան, Ներսիսեան Հոգեւոր Վարժարանի Ուսուցի

Ա. ՍՈՒՆ Ե հետևյալը. — Շատ-

—

ուն:

տատ ասած ընկերոջ մեջ մի ինչ-որ ներքին ուժ կա, որ ինձ ստիպում է ամեն ինչ անել նրա համար, ինչ որ կարող եմ, ինչ որ նա ինձանից խնդրում է, ինչ որ ես նրա համար անում եմ, ես ինքս էլ չգիտեմ, ինչ ուժ է դա, ինչ զգացմունք է դա, ես չգիտեմ, ես միայն գիտեմ, որ ես նրան սիրում եմ, ինչպես ոչ մի ուրիշ մարդու չեմ սիրել, ես նրան սիրում եմ, ինչպես ոչ մի ուրիշ կին չի

դևկցում էին։ Երկու ոսֆատ հետևում էին նրանց։ Երբ նրանք թաղի առանձնատան մոտը հասան, բանտարկյալին նայած տեղը հասան, բանտարկյալին հետևող երկու ոսֆատներից մեկը յանկարծակի մի հարուած իջեցրեց խնդճ հայի գլխին, որ մի րոպէ զղզդղալուց յետոյ, սրբենաթափուա վայր ընկաւ։ Ոստիկանները և վինուորները սկսեցին աքացկել նրան, որ վեր կենայ։ Երբ մարդը վեր կացաւ, իւր վերջին յուսալ հաւատեհան մէջ, մի կուռւի իջեցրեց գլխուորներից մեկին, որ վայր ընկաւ և ապա աքացի առնց միւսին։ Սակայն նա իսկոյն խորտակուեցաւ իւր վրայ բազմաթիւ յարձակուողների առաջ և նրան տեղուատեղը սպանեցին ինչպէս մի շուն։

Ամենակարևոր խնդիրը բոլորիս համար այս է. մինչև երբ այսպիսի անօրինականութիւններ պիտի համբերուին։

(«The Daily News», 10 հոկ.)։

Ս. Սպասո-Գիւլխան.

Պարիզ, 10 հոկտ. (Ն. տ.)։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պոլսի մեր թղթակցից այսօրուայ պոստով (հոկտ. 11-ին) ստացանք սեպտեմբերի 18-ին Պոլսում տեղի ունեցած ցոյցի մէջօրին Թրքահայերի կողմից Բ. Պրան մատուցանելիք խնդրագրի պատճէնը, որի տպագրութիւնը տեղի ազութեան պատճառով յետաձգեցինք։

—

Սոֆիայից (Բուլղարիա) հեռագրում են «Berliner Tageblatt» թերթին, որ այնտեղի հայերը հանդիսաւոր կերպով հոգեհանգիստ են կատարել Կ. Պոլսում սպանուած իրենց հայրենակիցների համար։ Հոգեհանգստին ներկայ են եղել և չատ մակեդոնացիներ։

—

Անգլիական լրագիրները պաշտօնապէս հաստատում են, որ Սասունում ներկայումս 5,000 հայ քաղցած և մերկ է։ Ամբողջ ամիսներով նրանք հաց չեն ճարում ուտելու, այլ կերակրւում են խոտով և ծառերի տերևներով։

—

Մեզ հաղորդում են, որ այս օրերս Շամախու գաւառապետ պ. Ֆոն-Ֆոխտը տեղեկութիւն ստանալով, որ Գեօկչայ գաւառի աւազակները մտադիր են մուտք գործել Շամախու գաւառը և մի քանի հարուստ գիւղերի ու մարդկանց տան վրայ յարձակումներ գործել, խնդրել է իւր կրտսեր օգնական պ. Պուրցեվաձին մի քանի չափաւորների հետ ուղարկում է գիւղերը չրջելու և տեղացիներին մօտ հեղափոխութիւն անելու, որպէս զի յիշեալ աւազակները հնարաւորութիւն չունենան իրենց դիտաւորութիւնները կատարածել, և գլխաւորապէս աշխատել նրանց հետքը գրանել ու ձերբակալել։ Այդպէս էլ անում են. մի քանի օր չրջելուց յետոյ յայտնւում է աւազակների հետքը գտնել վախից անուանուած գիւղում, որ Գեօկչայի և Շամախու տեղագիծն է, և ապա ձերբակալում են նրանց—3 հոգու, որոնք մտադիր են եղել իրենց համար նոր խմբեր կազմակերպել։ Սրանցից 2-ը լեզգիներ են, իսկ 1-ը Գեօկչայի թուրքերից։ Աւազակներին տարել են Շամախի ու բանտարկել են տեղական բանտում։

—

Լուսաւորութեան մինիստրութեան կից կազմուած մի առանձին յանձնաժողով չուտով խնդիր պիտի քննէ գործարանների փոքրահասակ բանուորների պարտադիր կրթութեան մասին։

—

Մեզ հաղորդում են, որ պ. Բ. Միքիմանեանի երաժշտական ֆիրմը հրաւիրել է յայտնի նուագածու Ռեզնիր քոյրերին Ռուսիայի մի քանի մեծ քաղաքներում, որոնց թւում և Թիֆլիսում, Բագուում, կոնցերտներ տալու համար։ Ռեզնիր քոյրերը այժմ կոնցերտներ են տալիս Աւստրիա-Ունգարիայի քաղաքներում։ Նրանցից Սոֆիա Ռեզնիրը ածում է ջութակի, Ռոզալիան դաշնամուրի, Էմիլիան վիոլոնչելի և Լոլան այլատյի վրայ։ Նրանք Թիֆլիս կը հասնեն Նոյեմբ. 20-ին։

—

Հեռագիրք Դորու և չրջակայ գիւղերից բազմաթիւակ դանգատներ են ստանում հայոց համայնքներից, որոնց մասին առայժմ ոչինչ չենք հրատարակում, այլ սպասում ենք գործերի պարզուելուն։

Ուշադրութեան արժանի է, որ Ախալքալաք գիւղի ըստ ինքեան խաղաղ համայնքը դպրոցական և եկեղեցական գործերով չմոքուած է։ Մեկ մուկ ամբողջ կատաղ է ազականում. դա ժողովրդական ուսած է։

—

«Նով. Օր.»-ին հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգապետի խնդրի համաձայն, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը Կարսի երկաթուղու վարչութեանը թոյլատրել է Խրամ գետի վրայ կամուրջ չինել այնքան լայն, որի վրայով կառքեր էլ կարենան։

—

Մոսկուայի գիւղատնտեսական ընկերութեան ախտաբանութեան մասնաժողովի նոր կազմուած կովկասեան ճիւղի անդամ առ այժմ դրուել են 80 ախտաբոյծներ և բուրդ արդիւնաբերողներ։

—

Գաւառական քաղաքներից պիտում են լամբարդութեանս և գանգատւում, որ իրենց գրած նամակներն և այլ կարգի յօդուածներ չեն հրատարակուած մինչև օրս։ Ինչ անենք, քանի որ մենք Պարիզից, Բերլինից, Մանչեստրից, Լոնդոնից և այլ տեղերից ստացած թղթակցութիւններից և յօդուածներից չատերն անդամ որոնք կարևոր են և օրուայ խնդրին են վերաբերում, չենք կարողանում. հրատարակել։ Համբերութեամբ պէտք է սպասել հերթին. ինչ որ յարմար է և կարելի է հրատարակել, կը հրատարակուի։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ. — Թեմիս ս. առաջնորդը համաձայն օրէնքի՝ մտադիր է վերադառնալ ս. Էջմիածին տեղաբութեան պատճառով։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Կասպեան ընկերութեան այրուող նաւթահորը արդէն մարած է Նորելի մօտ եղող ինժեներ Պեռլովսկու հրչէջ գիւտով։ Այդ գիւտը կարող է օգտակար հետևանքներ ունենալ այդպիսի դէպքերում։ Կասպեան ընկերութիւնը 10 օրուայ ընթացքում կորցրից իրրև այրուած նաւթի վնաս մօտ 50,000 րուբլի, բացի այդ դումարից, մօտ 5 հազար րուբլի էլ մսխել է մշակների կամ հրդեհը հանդցնելու վրայ։

Այժմ այդ հրդեհուած հորից քիչ հեռու Մանթաշեան ընկ. հորերից մէկն սկսել է անսովոր քանակութեամբ նաւթ արտավիժել, որի քանակութիւնը հասնում է 300,000 պուդի։ Հաշուելով, որ պուդը ներկայումս 9½—10 կ. է, տալ է Մանթաշեանը օրական օգտւում է այդ հորից 30,000 րուբլի։

Նաւթային առևտուրը չատ երբուող դրութեան մէջ է գտնւում։ Բալախանիում, առաւելապէս Ռոմանեան հողում, նաւթը ստիլի խոր չերտերում է գտնւում, երբեմն այդ խորութիւնը հասնում է մինչև 220 սաժէնի կամ ևս աւելի. այդ երևոյթը բացատրւում է նրանով, որ նաւթը սկսել է աստիճանաբար նուազել։ Ուստի նաւթարդիւնաբերողները, ի նկատի ունենալով Ապշերոնեան թերակղզու նաւթի նուազումը, արդէն ձեռնամուխ են եղել չրջակայքումը, այն է՝ Ղուբայի մօտերքը Խիղիզնդէյի, Սարայի, Գրնաղուլի և երկաթուղու գծի ուղղութեամբ մինչև Ալիաթ և Սանդաչալի կայարանի չրջանները հետազօտելու, ուր և, իբր նաւթ պարունակող դետնները, մեծ քանակութեամբ հողեր են գնում։

—

ՔՈՒԹԱՅՍԻՑ.—Հոկտ. 5-ին մեր քաղաքային խորհրդի մէջ 21 ձայնով ընդդէմ 10-ի վճռուեցաւ, որ տեղական դատաստանական բոլոր հաստատութիւնների համար մի մեծ չենք կառուցուի, ըստ պահանջման արդարադատութեան մ. մինիստրի, քաղաքիս ամենամօտ մասում, այն է՝ հայոց եկեղեցու կողքին, Ռիօն դեմ ոփում, «Յարակի դոմս կոչուած կալուածքում։

—Քութայիսում և չրջակայքում խիստ տարածուած են զանազան տարափոխիկ հիւանդութիւնները — դիֆտերիտ, տիֆ և այլն և տեղ—տեղ ինֆլուէնցա։ Երկու չաբաթուայ ընթացքում բուսական չատ զոհեր են եղել։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

—

«Նոր-Դար»-ի այսօրուայ 179 համարում մի լուր կար տպուած Բաթումից, որով հաղորդուում էր, թէ հայոց ծխական ուսումնարանում դասերը դեռ չեն բաժանուել. նորեկ ուսուցչուհին ռուսաց լեզուի դասերը չի վերցնում. ուստի ուսուցիչը ուզում է աւանդել թէ հայոց և թէ ռուսաց լեզուների, մինչդեռ հայոց լեզուի համար հրաւիրուած տիկին Շ. Յարութիւնեանցը պէտք է տիրապետի թողնել ուսումնարանը»։ Խնդրում եմ չնորհ անել, տէր խմբագիր, թոյլ տալ հրապարակով յայտնելու, որ իրողութիւնը յիղաչըրջուած է և ճչմարտութիւնը այս է. դեռ օգոստոսի 23-ի № 1026 թղթակից դասերը բաժանուած են. նորեկ ուսուցչուհին չպիտի աւանդէր ռուսաց լեզու. այլ այն, ինչ որ աւանդում է այժմ, Աւագը, որ է Դ. կարգի ուսուցիչ, պիտի աւանդէր և աւանդում է ռուսաց լեզուի բոլոր և հայոց լեզուի դասերը բարձր բաժանմունքում. Տ. Շ. Յարութիւնեանցը հրաւիրուած է եղել առաջին բաժանմունքների հայոց լեզուի դասերով։ Տարաձայնութիւնը միայն նրանում է եղել, որ յարդելի տիկինը ցանկացել է բոլոր հայոց լեզուի դասերը. պ. աւագ ուսուցիչը պնդել է պաշտօնական թղթով դեռ օգոստոսին եղած կարգադրութեան վրայ. որանով էլ փակուել է խնդիրը։ Հրաժարուող չի եղել. սեպտեմբերի 11-ից սկսուած պարապմունքները չարունակուում են։

Թիմ. տես.՝ Մեսրոպ քահ. Մելեան։

Թիֆլիս, 7 հոկտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՑԻՑ
(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Կ. ՊՈԼԻՍ, 1 հոկտեմբերի։

Սեպտեմբեր 30-ի նամակս թղթատարին յանձնելուց յետոյ ստացայ հետևեալ լուրերը։

Ուրբաթ-չաբաթ գիչերը մի խումբ գործաւոր թուրքեր կամ գուցէ՝ գործատերի հաղուստով ոստիկան վինուորներ յարձակւում են Խաս գիւղի մօտ հայ աղիւսագործարանների վրայ և սպանում են 7 հոգի. մնացածները ծանր կամ թեթև վէրքեր ստանալով հազիւ հաղ կարողանում են փախչել։

Նոյն գիչերը Գամ-Փաչայ թաղում սպանուած են երեք հոգի գաւառացի հայեր։

Շաբաթ օրն երեկոյեան պահուն յանկարծական յարձակում կրեցին Բանկալթիի եկեղեցւոյ արձակուած մի խումբ հայեր նոյն թաղի նեղ փողոցներից մէկում, որոնք ինքնապաշտպանութեան միջոցներից զուրկ լինելով, չկարողացան դիմադրել և երեք հոգի՝ ինչպէս լսում ենք, սպանուած են։

Այսօր Ղալաթիոյ Քէմէր-ալթի կոչուած տեղում թուրք հաւաքչիները դիտմամբ կամ ուշ բանուելով երկու հայկի հետ, ապտեցին նրանց։ Ոստիկանութիւնը չմիջամտեց մինչև այնժամանակ, երբ չարագործներն իրենց գործը կատարելուց յետոյ փախան։

Վանից, Բիթլիսից, Սըվազից և այլ տեղերից ոչ մի նամակ չի ստացուում. կարծէք թէ այդ կողմերն ամայացած են, բայց տարածուած լուրերը, որոնց ինչ ալբիւրից ըղլած լինելը ստուգել չկարողացանք,—սոսկալի են։ Պատմում են, որ Սեբաստիայում կատարեալ ճակատամարտ է տեղի ունեցել և կորուստը երկու կողմից էլ անչափ է։

Տրապիզոնի առջև կանգնած է մի ռուսական, մի յունական և թրքական դրօշ կրող մի չոգենաւ, որոնք ամենքն էլ լիքն են քրիստոնեայ բազմութեամբ, իսկ «Մեսաժըրի»-ի չոգենաւն էլ վաղը պիտի դնայ Բաթում և վերադարձին կանգ պիտի առնէ Տրապիզոնի առաջ։ Ասում են, մի քանի հատ ռուսական պահակիր նաւեր են կանգնած և թէ հիւպատոսներից մէկը սպասուած է։

Սեպտեմբեր 18-ի դէպքից յետոյ դեսպանները մի երկրորդ նոտով (յայտարիր) պահանջեցին.

1) Խաղաղութեան և անդորրութեան չուտափոյթ վերականգնումն մայրաքաղքի մէջ։

2) Բանտարկեալների ազատութիւն և եկեղեցիներում փակուած հայերի որն է պատասխանատուութիւնից զերծ մնալը։

3) Մի քննիչ յանձնաժողովի կազմուիլը Պոլսոյ պատահած ապստամբութեանց և այլ վնասները քննելու և մանրամասն տեղեկագիր պատրաստելու համար։

Այդ նոտով դեսպանները չեն մերժում, որ հայերի վարմունքը քննադատելի է, բայց ուշադրութեան են առնում, որ ոստիկանութիւնն և զօրքի գործած չարիքները անտրդարանալի են...

Եթէ երբեմնէ կազմուի Պոլսոյ դէպքը քննելու համար մի յանձնաժողով և ուզուի պատճառած հայերի ճիչտ թիւը գտնել, այն ժամանակ հնար կըլինի և վկայութեան կոչել քարափների ընկերութեան սուզակներին, որոնք ծովի յատակը դիակներով լիքը գտնելով, մի քանի օր գործարկցրին աչխատութիւնը, մինչև որ կառավարութիւնը գաղանաբար մաքրել տուաւ։

Այլ կերպ ճչմարտութիւնը երեան չի գալ, ոչքի առաջ ունենալով այն, որ Գասըմ-Փաչայում երկու սրճարանների մէջ բոլոր հայերին կոտորելուց յետոյ, ամբողջ գիչերն էլ աչխատեցին Դիլբոսի ջրով լցացած արիւնը լուանալ և սոսկալի ոճրագործութեան հետքերը ջնջել, որի մէջ գործօն դերն ստանձնել էր ինքը՝ երկրի ոստիկանութիւնը։

Սըր Ֆ. Կերըին թոյլատրութիւն խնդրելոյ բանաերը մտնելու և բանտարկեալ հայերի վիճակն անձամբ քննելու, որովհետև այնտեղի մասին պատմուած լուրերը նկարագրութիւնից դուրս բարբարոսական են։

Սուլթանը բացարձակապէս մերժից դեսպանի խնդիրքը։

Թրքական բանտերն ինկվիզիցիայի գաղտնիքներից աւելի մեծ գաղտնիքներ են պահում իրենց մէջ։ Եթէ երբ և իցէ կարելի լինի այդ գաղտնիքներից թափանցել և գրի առնել, այն ժամանակ ուրիչ վերնագիր չի յարմարիլ այդպիսի մի աչխատութեան, եթէ ոչ—«Գաղտնիք գժոխքի»։

Եւ միթէ չիմաք է Թուրքը, որ թոյլ տայ՝ այն էլ անգլիական դեսպանին, իւր աչքով տեսնելու այդ թրքական դժոխքի անթափանցելի մնացած գաղտնիքները։

Ֆուատ-փաչան սուլթանի հրամանով գնաց Դարդանել, ամրութիւնները քննելու համար. լսում է, որ նա գոհ չէ և չատ աննպատակ կարծիք է յայտնել նեղուցի ամրութեան մասին։ Թէև սա մասնաւոր տեսից ըղլող լուր է, բայց հաստատւում է նրանով, որ թիւրք կառավարութիւնն անմիջապէս թղթփիլներ և թնդանօթաձիգ զօրք ղրկեց Դարդանել։

Վեց պետութեանց դեսպանները միաձայն հաւանութեամբ իրենց կառավարութիւններին ղրկել են ռեֆորմների ծրագրի այն էական կէտերը, որոնք անհրաժեչտ են Թրքա-Հայաստանի բարեկարգութեան համար։ Կոնտրոլի գաղափարը վերացած է, դրա տեղ պիտի հսկէ այս բանի համար կազմուելի յանձնաժողովը, մասնակցութեամբ վեց պետութիւնների ներկայացուցիչ անդամների։ Հայոց պատրիարքը այս յանձնաժողովի հետ միասին յարաբերութիւն պիտի ունենայ։

Հայը չնորհակալ կըլինի, եթէ իւր անբռնաբարելի մարդկային իրաւունքները ճանաչուին։ Հայի բողոքը կայանում է այն բարբարոսական բռնութիւնների ու հալածանքների դէմ, որոնց տանել չի կարող և ոչ մի ազգ։ Աչքի առաջ ունենալով հայի կրած դառն տանջանքները, որոնք վաւերական փաստերով ապացուցուած են,—նրա պահանջը՝ որպէս զարման իւր վիճակի՝ խիստ չափաւոր է։

Ցաւանք թէ քրիստոնեայ պետութիւններն այլևս անտարբեր չեն մնալ, ինչպէս անտարբեր չէ քրիստոնեայ մամուլը։ Այդ յոյսը տալիս է մեզ այն հանդամանքը, որ այսօր ռուս մամուլն ևս հասել է այն վերջնական համոզման, որ Թրքահայերի վիճակն անտանելի է և թէ նրանց թողնել տիրող պայմանների մէջ այլ ևս անկարելի է։

Mars

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՑԻՑ
(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Կ. ՊՈԼԻՍ, 22 սեպտեմբերի։

Երէկուայ նամակով ղրկեցի ձեզ, որ չատերի գոված և մեզ անսպասելի պատճառով վերանորոգչի համբաւ ստացած Սայիդ-փաչան ընկնելով, նրա տեղ եպարքոսութեան բարձր պաշտօնին կոչուեցաւ Քեամիլ-փաչան։

Քեամիլ-փաչան Դամ-Դարուլ ծանօթ դէպքի ժամանակ վարում էր եալարքոսութեան պաշտօնը։ Դրանից քիչ վերջն էր, որ բոլորովին անպատեհ ընկաւ նա, որին յանդիմեց Զեադ-փաչան։ Քեամիլ-փաչայի հետ միասին փոխուեցան նաև մինիստրներից մեծ մասը, ինչպէս և Շեյխ-Իւլ-Իսլամը։ Դիպլոմատների չրջանում այդ անկումը գանազան կերպ բացատրուեցաւ, բայց այսքանս մեզ յայտնի է, որ այդ ժամանակներում Մեկքէի մէջ մեծ ապստամբութիւն կար, որն արձագանք էր տուել նաև այստեղի դէրվիչների մէջ։ Նոյն ժամանակ այդ դէրվիչներից մի քանի հազար հոգի ծովը թափուեցան, ինչպէս թափւում են այսօր հայերը։

Քեամիլ-փաչան, որքան մեզ յայտնի է, սերտ բարեկամ է Անգլիային։ Սայիդ-փաչան ընդհակառակն ուղի ռուսասէր էր երեւում, թէև իսկապէս նա ոչ այս և ոչ այն էր, այլ ուղղակի անատակ մի պաշտօնեայ։ Բայց նրա սարսափելի հակառուսականութեան մասին ես արդէն վաղուց դրել եմ և փորձերն էլ տպագրուեցին։

Կարծողներ կան, որ հակառուսական Սայիդի տեղ անգլասէր Քեամիլ-փաչան եալարքոսութեան կոչուելովը, Թիւրքիոյ քաղաքականութիւնը զգալի փոփոխութիւն պիտի կրէ։

Երէկ (21 սեպտ.) չատ կարևոր դէպքեր տեղի չունեցան. գիչերը յարձակման մի քանի փորձեր եղել են թէև, բայց ժողովուրդն արդէն ինքնապաշտպանութեան հնարաւոր միջոցները ձեռք առած լինելով, մնացել է անվտանգ։ Խուլ փողոցների մէջ միայն մի երկու մարդիկ սպանուեցան։ Գաղխանէում սպանուեցան չորս հոգի, Թոփխանէում երեք հոգի, որոնցից մեկը յոյն, Գալաթիայում մի հայ, որ պատահա-

գիշերապահ էր։ Արուարձաններում եթէ նոյնպէս մարդ դէպքեր էլ պատահել են, լուրը մեզ չէ հասել։

Բայց և այնպէս երկիւղն ընդհանուր է։ Սոսմբոլի կողմը մեծ մասամբ վաճառատները, արհեստանոցները, դրամատները և այլն փակ են։ Բազմամարդ Պոլիսը մի անմարդաբնակ քաղաքի տպաւորութիւն է գործում։ Այդ փողոցներով անցնողն անկարող է չսարսափել, մանաւանդ երբ յաճախ հանդիպում են ամֆուտներ և ասպիսան զինուորներ, որ մարդուս վրայ նայում են գազանային նայուածքով։

Այդ ազգի երակների մէջ գազանի արիւն է վազում, այդ ազգը բացառիկ գազանային յատկութիւններ ունի։ Նա դժուար թէ կարողանայ քաղաքակրթուել։

Հայ հեղեղիները լիքն են բազմութեամբ. այնտեղ մանողն այլևս կարող չէ դուրս գալ, որովհետև անմիջապէս կբռնեն։ Եկեղեցիների բակերում ապաստանած բազմութեան վիճակն անասելի է։ Մեծ մասամբ օրավարձով աշխատող մարդիկ են, իսկ այժմ ոչ ուտելիք, ոչ խմելիք ունին։ Ապտոտ հազուստների մէջ, բաց օդում և այն այնքան խիտ համախմբուած, որ ապասելի է, որ առաջ գան տարափոխիկ հիւանդութիւններ, սպասելի է որ եկեղեցիները բոյն դառնան խոլերայի, որ մուտք է գործել Կ. Պոլիս։

Այսօր պետութիւնների դեսպանները դիմելով Բ. Դրան, պահանջեցին, որ թոյլ տրուի իրենց իրենց հպատակների պաշտպանութեան համար զրահակիր նաւեր ներս բերելու։ Դուռը աշխատում է հաւատացնել պետութիւններին, թէ իրենց հպատակներին ոչինչ վտանգ չէ սպասում. բայց եթէ նոյն իսկ դեսպանները հաւատալու արամադիր լինին, օտար ժողովուրդներն անկարող են հաւատալ, քանի որ թիւրք զօրքի և ժողովրդի բարբարոսութիւններին չատ անդամ ականատես են եղել։

Երէկ Անգլիոյ դեսպանատան թարգմանը պատրիարքարան գնաց և մօտ երկու ժամ չափ տեսակցութիւն ունեցաւ ս. պատրիարքի հետ։

Այսօր զինուորներին 40 ական փամփուշտ բաժանեց կառավարութիւնը։

Գէտիկ-Փաշայից լուր բերին ինձ, թէ երէկ, սեպտ. 21-ին, ամերիկեան միսիոնարների դպրոցը նոյն թաղում բացուած է Միացեալ Նահանգների դեսպանի միջամտութեամբ։ Այդ դպրոցում, ի հարկէ, ուսանում են հայերը։ Պ. Թըռըլը ուղղակի սպիակել է հայերին, որ իրենց որդիներին դպրոց ուղարկեն, ասելով, որ Թուրք կառավարութիւնը հայերի հետ միայն գործ ունի և ոչ բողոքականների...

Ուրիմն այն բողոքական հայերը, որ այսպէս ուսանում են, պ. Թըռըլի կարծիքով, հայեր չեն։

Մենք Ամերիկայի ազատամիտ գաւակներից այդ բանը երբէք չէինք սպասում, այն Ամերիկայից, ուր խղճի և դաւանանքի ազատութիւնը այնքան յարգի է, ուր միսս Ալիս Բլակուէլները և այլ այնքան ազատասիրական կանայք ու մարդիկ են ծնւում։

Բայց ես չեմ կարող մի անհատի յանձնքը՝ որքան էլ նա ամերիկական հասարակապետութիւնը ներկայացնելիս լինի,—վերագրել ամբողջ ամերիկացիներին։ Թըռըլին մենք վաղուց ճանաչում ենք և ճանաչում ենք իբրև մի մարդու, որի ներկայութիւնը, ինչպէս միշտ ասել ենք, պատիւ չի կարող բերել ամերիկեան հասարակապետութեան։

Կառավարութիւնը ամեն ջանք թափում է, որ եկեղեցիներում ժողովուած հայերը ցրուին և գործերը վերսկսուին և այս բանի համար նոյնիսկ ճնշում է բանեցնում ս. պատրիարքի վրայ. բայց այժմ ժողովուրդը այնքան հատատ չունի ոչ ոքի վրայ, որ չէ կամենում տարբը եկեղեցու բակից դուրս դնել, մինչև որ իրական ապահովութիւն չտրուի երևոյթ։ Անձամբ տեսակցութիւն ունեցայ եկեղեցիների բակերում փակուածների հետ և ուզեցի դիտենալ, թէ ինչ են մտածում և ինչ են կամենում անել...

Նրանք ինձ պատասխանեցին, որ իրենք ամենայն ուրախութեամբ քաղցից ու ցրտից կըմեռնեն մայրենի եկեղեցու բակում, քան կընկնեն բարբարոսների ձեռքը։

«Մենք այժմ հաստատ համոզուած ենք, որ թիւրք կառավարութիւնը մեզ կամենում է ջնջել. դրա ապացոյցն այն է, որ մենք խնդիրքով դիմեցինք իւր ներկայացուցչին, իսկ նա մեր համախմբումը պատրուակ բռնելով, իւր զօրքով ջարդեց մեզ։ Քանի որ այդպէս է, քանի որ մեր մահն անխուսափելի է, ուրեմն կամ կըմնանենք այստեղ փակուած կամ եթէ կուզեն, որ անպատճառ դուրս գանք, մեր վերջին չունչը կըտանք թիւրքի դէմ կռուելով։ Պայմանները կըփոխուեն, եթէ եւրոպական պետութիւնները մեր կեանքի համար կերաշխաւորեն օրինաւորապէս»...

Կացութիւնը երկու կողմից էլ կրիտիկական է, մանաւանդ որ կատարածները միշտ չարունակւում են։

Ս. պատրիարքը վաղը այցելութիւն պիտի տայ նոր եպարքոս Քնամիլ փաշային։

Պարիզի և Վիեննայի թերթերը Պալսում պատահած իսուռնակութիւնը խղաթիւրել են. պէտք չէ հաւատալ երկու պատճառով, նախ՝ որ չատ թիւրթեր սրտէն կաչառուած են և երկրորդ՝ կան պետութիւններ, որոնք կըցանկային, որ սոյն դէպքը մեծ աղմուկ չհանէր և չուտով ծածկուէր։ Ինչ որ մենք գրում ենք սոյն դէպքի մասին, ամենատոյդն է և ամենանուազը՝ ատանց չափազանցութեան։

Զորեքշաբթի օրը կայացաւ թրքական բարենորոգումները խմբագրող յանձնաժողովի նիստը նախագահութեամբ արտաքին գործերի մինիստր Թուրքան փաշայի, որ նախագահն է միևնոյն ժամանակ սոյն հռչակաւոր յանձնաժողովի։

Mars

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

—

Լոնդոնից «Նով. Վր.»-ին հեռագրում են.—«Դիպլոմատիքական աղբիւրներից իմացած անեկդոտներից երևում է, որ «Standard»-ի հաղորդած այն լուրը, թէ անգլիական նաւատորմիղը պիտի չարունակէ մնալ Դարդանելին մօտիկ, ճիշտ չէ, որովհետև անգլիական նաւատորմիղը չի մնում մինչև անդամ Դարդանելի մուտքի մօտ, այլ հեռացել է դէպի Լեմնոս կղզին, դէպի այն ջրերը, ուր մանկն ազատ է համարում բոլոր ազգութիւնների նաւերի համար»։

—

«Morning Post»-ը մի երկար թղթակցութիւն է տպել Բելգիից, որի մէջ, ի միջի այլոց, ասւում է.—«Եթէ անգլիացիները յոյս ունէին, որ Գերմանիան հակակշիռ կըկազմէ Ռուսիայի դէմ Եւրոպայում, ապա գերմանացիները, իրենց կողմից, յոյս ունին, որ ապագայ պատերազմը մի կռիւ կըլինի Ռուսիայի և Անգլիայի միջև Ասիայում տիրելու պատճառով։ Այդ կռուի մէջ, գերմանական հասարակութեան մեծ մասի համոզմամբ, Ռուսիան կըյաղթէ»։

—

Մակեդոնական յեղափոխական կոմիտեն, «Նով.»-ի ասելով, մի ժողով է կազմում Սոֆիայում նոյեմբեր ամսին։ Կոմիտեի դեկավարներին ամեն կողմից խորհուրդ են տալիս սպասել, մինչև որ հայոց գործը վերջանայ։

—

«Times»-ին Կ. Պոլսից հեռագրում են, որ մահմեդականների դժգոհութիւնը չուտով այնպիսի ծաւալ կըստանայ, որ ամբողջ սուլթանական տունը գահնկէց կանուի և իսլամը կ'ազատուի օտարերկրեայ ազդեցութիւնից, որը, մահմեդականների կարծիքով, ջլատում է նրա ոյժերը։ Պաշտօնական չրջանները մեծ գործերի վրայ են։ Կ. Պոլսի տեղապահ դնդին աւելացուած է 3,000 զինուոր. զէնքի են կոչուած գարձեալ 10,000 հոգի։ Նոր թնդանօթներ են դուրս բերւում, տեսնւում են և պատերազմական ուրիշ պատրաստութիւններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ԻՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ.

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

հոկտեմբերի 10-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով

Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ.	92,60
Բերլինի վրայ 100 մարկ	45,175
Պարիզի վրայ 100 ֆր.	36,60
Վեքսէլի կուրսի տրամարդ. խազաղ է։	
Նոր կտրած պոլտինայե-	
րեալները	7,40 – 7,40
Մաքսային կուպ. (100 ր.	
մետալով)	147½ – 148
Բորսային զեկոյը	6½ – 7½-ից %
4% Վետակ. արժէթղթ.	98¼ սակ.
5% ոսկ. արժէթղթ. 1884 թ.	160 գն.
5% Առաջ. Ներքին փոխ.	
խազաղատմ 1864 թ. . . .	269½
5% Երկր. Ներք. փոխառ. .	
խազաղատմ 1866 թ. . .	268¾
Ագնուակ. հող. բանկի . .	
գրաւակ. խազաղատմ . .	231¼
5% Վետակ. երկաթուղ.	
արժէթուղթ	101¼
4½% Ներքին փոխ. I աեր.	97¾
,, ,, ,, II ,,	97¾
,, ,, ,, III ,,	97¾
,, ,, ,, IV ,,	97¾
4½% փոխ. 1893 թուի . .	101
,, փոխ. 1 հրաւարակ.	100¼
,, փոխ. 2 հրաւարակ.	100¼
4½% Գրաւակ. արժէթղ.	
ազն. հողային բանկի . .	100
4½% Գիւղական հողային	
բանկի վկայաթղթեր . .	100½
5% Ս. Վետ. քաղ. վ. բնկ.	100
,, ,, Մոսկուայի . . .	101½
5½% Դեռասպի	100¼
5% Թիֆլիսի	97¼ գն.
5½ Գրաւակ. արժէթ. հող.	
բանկերի Խարկովի . . .	100
,, Կալուգայի	99½
,, Տուլայի	100¼
,, Կիևի	101½
,, Մոսկուայի	100
,, Բեսարաբիայի	99½
,, Ներքին-Սամարայի . .	100¼
,, Դոնսկոյ	99¼
,, Վիլենսկի	100
6% Թիֆլիսի կալ. բանկի	101½ գն.
5% ,, ,, ,,	99½ վաճ.
6% Քութայիսի կալ.բանկ.	101½գն.
5% ,, ,, ,,	99½ ,,

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Կեդրոնական, Զ. Գրիգորեանի և Ն. Խիդեկելի գլխավոր ճառանոցներում վաճառւում է գնդապետ ԼԱԶԱՐԵԱՆԻ 7 գլխից բաղկացած

„ՊՐԻՉԻՆԻ"

бѣдствій Армянъ въ Турціи и отвѣтственность за

РАЗОРЕНІЕ САСУНА

Գինը բրոշիւրը 40 կ.։

(702) 4—3.



Фабрика піанино А. КОППЪ

(Михайловская, № 132-й).

Продаются піанино изъ лучшихъ мѣстныхъ и заграничныхъ матеріаловъ на металлическихъ доскахъ съ перекрестными струнами. Отпускъ піанино на прокатъ. Пріемъ инструментовъ въ почин

(367) 50—5

Պատիւ ունիմ յայտնելու Կովկասի ս. ս. վաճառականներին, որ ես լինելով մշտապէս **ՎԱՐՉԱՒՈՒԻ**, յանձն եմ առնում և կատարում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, ևս առաւել շուեդէն ապրանքներ առնելում (որի հետ ես լաւ ծանօթ եմ) նոյնպէս կարած ոտնամաններ գնելում։

Իմ հասցէս՝ Варшава, Переѣздъ, домъ №9 Товмасъ Яргул

(703) 12—3

Օրիորդ **Մ. Յ. ԱՄԱԼԱՄԱԶԵՆԻ** (կանո
բարձրագոյն կուրսերն աւարտած)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Տեղափոխուած է Կալեայ Խեչոյան փողոց տուն № 14.

Ընդունւում են երկու սեռից աշակերտներ առաջին, երկրոր և երրորդ պատրաստական դասարանները, որտեղից ընդունւում են միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները։

(366) 7—4

ՍՏԱՑՈՒԱԾ Է Կ. ՊՈԼՍԻՑ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄԻՍ Է

ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

(ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ)

ԻՍԼԱԿԱՆ ԼՈՒՍԱՒԱԿԱՐԸ ՋԱՆԱՋԱՆ ԴԻՐՔԵՐՈՎ

Գինը 40 կ. մինչև 1 ր. 50 կոպէկ

Դիմել՝ Тифлисъ — *միմիայն*. Подъ гост. Кавказъ, магазинъ Теръ Осепіанцъ. Որովհետև Թիֆլիսի մի լուսանկար արտանկարել է այդ պատկերից, ուստի գնողների ուշադրութիւնը գարձնում ենք կոպեկի վրայ, որի տակը գրուած է ֆրանսերէն՝ CONTADZIAN CONSTANTINOPLE

(704) 3—1

Մխիթար կայսրանից ոչ հեռու, երկաթուղու գծի մօտ անցեալ աւարտանից բացուած

ԲԱԳՐԱՏ ԱԼԻԲԷԳԵԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

պատրաստում է ամենալաւ կարից զանազան տեսակ աղիսներ Մարսէլլի տեսակի *կրամիտ* և *տոմնա* յատակների համար։ Բոլոր նմուշները և գործարանի պրէյս կուրանտը կարելի է ստանալ քաղաքային տան տակը (подъ городской управой) պ. Նագինովի թղթի խանութում, պ. Զուլանի խանութներում Գոլովինակի պրոսպեկտի վրայ Դոբրժանսկու տանը և Միքայէլեան կամուրջի վրայ Վարանցովի արձանի հանդէպ, Ս. և Կ. Գերասիմիչ Եղիազարովների խանութում թուղթայ մայդանի մօտ և Սվճալեան ձիաքարշի պարկում, երկաթուղու կայարանի մօտ։

Օտարաքաղաքացիք թող բարեհաճեն դիմել նամակով և հեռագրով Тифлисъ Баграту Алибекову կամ Мцхетъ, заводъ Алибекова.

(680) 15—12.

ՕՃԻՍԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀՈՒՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՈՆ Է 22,500,000 րուբլի

Ընկերութեան տակաւարիր թղթերը պահւում են սեռակ. բանկում

Ննդողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել ապրկանց ապագան, «Ինսիա» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինքի) ապահովագրութիւնը.

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 րուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին տանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Ինսիա» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 րուբլի, (ուրեմն ամբողջ տարուայ ընթացքում 208 րուբլի.)

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իւր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

Ս.թ. 1-ն յունուարի 1893 թ. «Ինսիա» ընկերութիւնը 10.811 աղջկանց համար ապահովագրած ունի բաժինք 24.665.300 րուբլու գումարի։

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կըստացուի իրրև թոշակ (պենսիա) կրթութիւնը չարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։

Ապահովագրութեան մասին յարաբերութիւնները ընդունւում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են վարչութիւնը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37) Կովկասեան չրջանի համար՝ ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեւսկայա փ., տ. № 6. երկրորդ յարկում։ բոլոր գործակալութիւններում կայարութեան բոլոր քաղաքներում։

(334) 50—37.

Тифлисъ Доз. Цензурою 11-го Октября 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. Церковный домъ